



## ԿոՄիտաս

Մկրտիչ Ա.Խրիմյան Ամենայն Հայոց Կաթողիկոսին  
1895, 25 հուլիսի, Ս. Էջմիածին

Վեհափառ Հօրն

Տ. Տ. Մկրտչի Ա.

Սրբազնագոյն Կաթողիկոսին

Ամենայն Հայոց Քահանայապետ սուրբ,

Եօթն ամս անուցուցեալ է իմ 'ի վերայ, յորմէ հետէ ժողովեմ զՀայոց ժողովրդական երգս եւ գպարերգս, գորոց տակաւին կարի սակաւ ինչ է յայտ գեղանակացն, զկազմութեանցն եւ զկնի:

Ժողովրդական եղանակքն Հայոց 'ի պարզութիւն եւ 'ի վեհութիւն իրեանց գնմանութիւն բերեն գնուագաց շարականաց նախնեաց մերոց սրբոց, յորս արտայայտին կեանք եւ միտք Հայկեան սեռիս. եւ սոքա ցարդ կան թաղկեալ 'ի թագստի եւ 'ի կողմն յուշից եւ յուրուշից յիմաստնոց՝ ի փիլիսոփայից. եւ արդ եւեթ պահեալ կան 'ի գեղջկական հանճարի նախնեաց թարմ եւ անխառն զգացմանց երաժշտութիւն, որ եւ խուն առ խուն և 'ի կորուստ դիմեալ յառաջէ յերեւումն օտար եղանակաց: Եթէ ո՛չ տարածեսցէ զձեռսն, 'ի բարձր բագուկ, յօճուն լինիլ, Հօտապետդ քարշել, հանել 'ի կորստենէն իսպառսպորտ յանյատութիւն եւ 'ի մոռացօնս դատապարտեսցին:

Բաց յայդմանէ, 'ի ժողովրդական եղանակսն Հայոց իբրեւ զծիր իմն կարմիր նկատեն առընչութիւնք սոցա եղանակաց շարականաց: Ի մէն միում յերգսն գեղջկայինսն որպէս զշող ցոլայ բնատուր հանճար Հայաստան ազին, որ եւ կարօտի բազմապիսի ուսումնասիրութեանց:

Ուստի համարձակիմ խնդրել ‘ի համբոյր Սուրբ Աջոյդ Հայրապետիդ, թոյլատրել,  
‘ի բան բարձր հրամանի Ձերոյ, ի տպագրել գանգին գանձան, գորս ւուանդեալ է  
մեզ բազմահարուստ հանճարոյ նախնեաց մերոց սրբացելոց:

Քահանայապետիդ

Ամնախոնարի ծառայ եւ որդի

Կոմիտաս Վարդապետ Սողոմոնեան